Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2024 թվականի աշխատանքային ծրագրով 1-ին եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024 թվականի աշխատանքային ծրագրով 1-ին եռամսյակի ընթացքում նախատեսվում է՝

- Լրամշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված՝ էներգետիկայի բնագավառում լիցենզիա ունեցող անձի բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման, ինչպես նաև լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համաձայնեցման կարգը:
- Վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման տեմպերի վերաբերյալ հանրությանն իրազեկելու նպատակով տարեկան արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման տեմպերի ուսումնասիրության վերաբերյալ կազմված վերլուծական տեղեկանքը:
- Հանձնաժողով ներկայացված դիմումների քննարկման մասով հանրությանն իրազեկելու նպատակով կազմել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել 2023 թվականին հանձնաժողովում մուտքագրված դիմումների քննարկման ընթացքի վերաբերյալ տարեկան տեղեկատվությունը:

- Հանրային կազմակերպությունների կողմից գնումների առանձին գործարքների արդյունավերության ուսումնասիրության և գնումների կարգերի լրացուցիչ պահանջներին համապատասխանության գնահատման նպատակով՝ իրականացնել հանրային կազմակերպությունների 2023 թվականի գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարների ընտրության ընթացակարգերի մոնիթորինգը:
- Մշակել և հաստատել «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների հաշվարկման մեթոդիկան:
- Լրամշակել «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսատնտեսական հաշվետվությունների ձևերը և դրանց ներկայացման կարգը:
- Լրամշակել «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման ու վերանայման կարգը:

Եռամսյակային արդյունքներով կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվեն՝

- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության,

ինչպես նաև հեռահաղորդակցության ոլորտը բնութագրող տեխնիկատնտեսական ցուցանիշները: